ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները հաշվարկվում եւ սահմանվում են «Էներգետիկայի մասին» օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկաների եւ կանոնների հիման վրա, ինչպես նաեւ հաշվի են առնվում պետություն-մասնավոր հատված գործընկերության ծրագրերի շրջանակում կնքված համաձայնագրերի պահանջները:

- Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, ծառայություններ մատուցող ընկերությունների եւ սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները վերջին անգամ վերանայվել եւ ուժի մեջ են մտել 2022 թվականի փետրվարի 1-ից, բացառությամբ ՁԷԿ-երի, որոնց համար 2022 թվականի օգոստոսի 1-ից:
- Համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի՝ էլեկտրաէներգիայի սակագները կարող են վերանայվել 6 ամսից ոչ շուտ, սակայն ՀԾԿՀ-ն սովորաբար էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերանայում է տարեկան արդյունքներով:
- Հաշվի առնելով նշվածը՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ից ՀԾԿՀ-ի նախաձեռնությամբ սկսվել է էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, ծառայություններ մատուցողների սակագների եւ ՀԷՑ-ի սակագնային մարժայի վերանայման գործընթաց:

2023թ. փետրվարի 1-ից մինչեւ 2024թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածի համար էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վրա ազդեցություն ունեցող գործոնները դասակարգենք հետեւյալ հիմնական խմբերում՝

- Արտարժույթների փոխարժեքների փոփոխություն,
- Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կառուցվածքի փոփոխություն,
- ՎԷՌ փոքր կայանների սակագների փոփոխություն,
- Հաշվեկշռման եւ հաճախականության կարգավորման նպատակով 2-րդային եւ 3-րդային պահուստի ապահովման ծառայության ներդրման արդյունքում ՀԷՑ-ի կողմից հզորության գնման ծախսի փոփոխություն,
- ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն՝ համաձայն վարկային պայմանագրերի,
- Էլեկտրաէներգետիկական համակարգում 2022թ. իրականացված ներդրումների փոխհատուցում մաշվածության եւ շահույթի տեսքով,
- Միջուկային վառելիքի ծախսի փոփոխություն,
- Աշխատավարձի գծով ծախսի փոփոխություն,
- Արտադրող կայանների եւ ծառայություն մատուցողների մոտ կանխատեսված եւ փաստացի ծավալների շեղման արդյունքում հասույթի ճշգրտում,
- Էլեկտրաէներգետիկական համակարգում ծախսերի փոփոխություն:

Արտարժույթների փոխարժեքների փոփոխությունը համակարգի վրա ունեցել է **գումարային դրական ազեցություն՝ շուրջ 17.7 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական **սպառողների վաճառքի միջին սակագինը նվազեցնում է 4.09 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

	01.02.2022-01.02.2023 սակագնային տարի	*01.02.2023-01.02.2024 սակագնային տարի*
$	477,45	395,19
€	552,17	392,58
¥	4,18	2,684

Էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման կառուցվածքի փոփոխությունը համակարգի վրա ունեցել է **գումարային դրական ազեցություն՝ շուրջ 7.3 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական **սպառողների վաճառքի միջին սակագինը նվազեցնում է 1.69 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Արտադրող կայաններից ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար առաքվող էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը

№	Անվանումներ	01.02.2022-31.01.2023 սակագնային տարի	01.02.2023-31.01.2024 սակագնային տարի	Տարբերություն
		մլն կՎտժ	մլն կՎտժ	մլն կՎտժ
1	**ԸՆԴԱՄԵՆԸ էլեկրաէներգիայի առաքում, այդ թվում՝**	**6937.91**	**7408.10**	**+470.19**
1.1	*«ՀԱԷԿ» ՓԲԸ*	*2395.20*	*2454.0*	*+58.8*
1.2	*«Երեւանի ՋԷԿ» ՓԲԸ*	*609.26*	*703.09*	*+93.83*
1.3	*«Արմփաուեր» ՓԲԸ*	*1208.06*	*1524.23*	*+316.17*
1.4	*«Հրազդան-5» կայան*	*77.82*	*222.82*	*+145.0*
1.5	*«ՀրազՋԷԿ» ԲԲԸ*	*60.21*	*0.0*	*-60.21*
1.6	*«ՄԷԿ» ՓԲԸ*	*380.01*	*390.37*	*+10.36*
1.7	*«Քոնթուրգլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ*	*944.42*	*900.0*	*-44.42*
1.8	*Փոքր կայաններ եւ ներկրում*	*1262.93*	*1213.59*	*-49.34*
2	**Կորուստները հաղորդման ցանցում**	**106.51**	**154.92**	**+48.41**
3	**Մուտքը բաշխիչ ցանց**	**6831.40**	**7253.18**	**+421.78**
4	**Էլեկտրաէներգիայի մանրածախ սպառում, որից՝**	**6084.53**	**6433.27**	**+348.74**
4.1	*«ՀԷՑ» ՓԲԸ-ի սպառողների սպառում*	*6084.53*	*5197.28*	*-887.25*
4.2	*ԷՄՇ այլ մասնակիցների սպառում*	*0.0*	*1235.99*	*+1235.99*

ՎԷ ռեսուրսներով գործող էլեկտրաէներգիա արտադրող կայանների սակագների նվազման արդյունքում նշված **կայաններից** էլեկտրաէներգիայի **գնման ծախսն նվազում է շուրջ 3.47 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը նվազեցնում է 0.8 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



Հաշվեկռման եւ հաճախականության կարգավորման նպատակով 2-րդային եւ 3-րդային **պահուստի ապահովման ծառայության ներդրման արդյունքում ՀԷՑ-ի կողմից հզորության գնման ծախսը նվազում է շուրջ 2.35 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը նվազեցնում է 0.54 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ **վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերն ավելացել են շուրջ 19.49 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 4.5 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

մլրդ դրամ



Իրականացված նոր **կապիտալ ներդրումների փոխհատուցում՝** հաշվի առնելով կուտակված մաշվածությունը: Արդյունքում, մաշվածությունն ու շահույթն **ավելացել են շուրջ 4.9 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 1.13 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

մլրդ դրամ



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ում **միջուկային վառելիքի ծախսը ավելացել է շուրջ 5.4 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 1.25 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Միջին ամսական աշխատավարձի ավելացման անհրաժեշտությամբ պայմանավորված **աշխատավարձի գծով ծախսը ավելացել է շուրջ 3.72 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 0.86 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Արտադրող կայանների եւ ծառայություն մատուցողների մոտ կանխատեսված եւ փաստացի ծավալների շեղմամբ պայմանավորված **հասույթի ճշգրտման արդյունքում ծախսը նվազում է շուրջ 2.16 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը նվազեցնում է 0.5 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ծախսային հոդվածների վերլուծության արդյունքում գործող սակագների հաշվարկների համեմատ տեղի են ունեցել **շահագործման եւ պահպանման ծախսերի շուրջ 0.55 մլրդ դրամով (առանց ԱԱՀ-ի)** կրճատում, որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.13 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Էլեկտրաէներգիայի սակագների վրա ազդող գործոնները

	ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒՅՈՒՆ	ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒՅՈՒՆ
Վարկերի մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն		+ 19.49 մլրդ դրամ (+ 4.5 դրամ/կՎտժ)
Նոր ներդրումների արդյունքում մաշվածության եւ շահույթի ավելացում		+ 4.9 մլրդ դրամ (+ 1.13 դրամ/կՎտժ)
Միջուկային վառելիքի ծախսի ավելացում		+ 5.42 մլրդ դրամ (+ 1.25 դրամ/կՎտժ)
Աշխատավարձի գծով ծախսի ավելացում		+ 3.72 մլրդ դրամ (+ 0.86 դրամ/կՎտժ)
Արտարժույթների փոխարժեքների փոփոխություն	- 17.7 մլրդ դրամ (- 4.09 դրամ/կՎտժ)	
Արտադրության եւ սպառման կառուցվածքի փոփոխություն	- 7.3 մլրդ դրամ (- 1.69 դրամ/կՎտժ)	
ՎԷՌ փոքր կայանների սակագների փոփոխություն	- 3.47 մլրդ դրամ (- 0.8 դրամ/կՎտժ)	
Պահուստի ապահովման ծառայության ներդրման արդյունքում ՀԷՑ-ի կողմից հզորության գնման ծախսի նվազում	- 2.35 մլրդ դրամ (- 0.54 դրամ/կՎտժ)	
Հասույթի ճշգրտում եւ շահագործման ու պահպանման ծախսերի փոփոխություն	- 2.71 մլրդ դրամ (- 0.62 դրամ/կՎտժ)	
ԸՆԴԱՄԵՆԸ ազդեցությունը	ՀԷՑ-ի սպառողներին էլեկտրաէներգիայի վաճառքի սակագների վերանայման անհրաժեշտություն չի առաջանում	

Խոշոր արտադրողների եւ ծառայություններ մատուցողների սակագները

(առանց ԱԱՀ-ի)

№	Անվանումներ	Չափի միավոր	մինչև 31.01.2023 գործող	01.02.2023-ից առաջարկ	Տարբերություն	
					մեծությ.	%
1	**«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ**					
	Առաքվող էլեկտրական էներգիայի սակագին	դրամ/կՎտժ	15.921	15.439	-0.482	-3.0%
2	**«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ**					
	Առաքվող էլեկտրական էներգիայի սակագին	դրամ/կՎտժ	19.686	19.132	-0.554	-2.8%
3	**«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ**					
	Երկդրույք սակագնային համակարգ					
	էլեկտրաէներգիայի դրույք	*դրամ/կՎտժ*	*7.316*	*5.984*	*-1.332*	*-18.2%*
	հզորության ամսական վճար	*դրամ/կՎտ*	*3,131.37*	*1,753.36*	*-1,378.01*	*-44.0%*
	Միադրույք հաշվարկային սակագին	դրամ/կՎտժ	19.273	15.033	-4.240	-22.0%
4	**«Արմփաուեր» ՓԲԸ**					
	Երկդրույք սակագնային համակարգ					
	էլեկտրաէներգիայի դրույք	*դրամ/կՎտժ*	*20.075*	*16.659*	*-3.416*	*-17.0%*
	հզորության ամսական վճար	*դրամ/կՎտ*	*6,243.36*	*4,981.27*	*-1,262.09*	*-20.2%*
	Միադրույք հաշվարկային սակագին	դրամ/կՎտժ	35.208	26.454	*-8.75*	*-24.9%*
5	**«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ**					
	ՀԷՑ-ին առաքվող էլեկտրաէներգիայի սակագին	դրամ/կՎտժ	18.097	13.578	-4.519	-25.0%
	Հաշվեկշռման նվազագույն սակագին	դրամ/կՎտժ	15.921	15.439	-0.482	-3.0%
	Հաշվեկշռման առավելագույն սակագին	դրամ/կՎտժ	29.997	27.905	-2.092	-7.0%
	Պահուստի ապահովման ծառայություն	դր/կՎտ/ամիս		258.95		
6	**«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայան**					
	Երկդրույք սակագնային համակարգ					
	էլեկտրաէներգիայի դրույք	*դրամ/կՎտժ*	*23.310*	*20.671*	*-2.639*	*-11.3%*
	հզորության ամսական վճար	*դրամ/կՎտ*	*4,588.85*	*2,848.99*	*-1,739.86*	*-37.9%*
7	**«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ**					
	Երկդրույք սակագնային համակարգ					
	էլեկտրաէներգիայի դրույք	*դրամ/կՎտժ*	*32.389*	*27.905*	*-4.484*	*-13.8%*
	հզորության ամսական վճար	*դրամ/կՎտ*	*286.02*	*388.27*	*102.25*	*35.8%*
8	**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ**					
	էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության սակագին	դրամ/կՎտժ	1.45729	2.79750	1.340	92.0%
9	**«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ**					
	Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության	դրամ/կՎտժ	0.2367	0.1983	-0.038	-16.2%
10	**«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ**					
	Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության սակագին	դրամ/կՎտժ	0.0529	0.0659	0.013	24.6%

ՀԷՑ-ի կողմից էլեկտրաէներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները

դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի)

№	Բաշխման ցանցին միացման տեսակը	Գործող սակագին	ՀԾԿՀ առաջարկ *(01.02.2023-ից)*	Տարբերություն
1	110 կՎ լարմամբ միացման, հաղորդման ցանցին և հաղորդման ցանցին միացած արտադրողներին միացման համար	1.550	1.680	0.130
2	35 կՎ լարմամբ միացման համար	2.923	2.824	-0.098
3	6(10) կՎ լարմամբ միացման համար	7.558	7.730	0.172
4	0.38(0.22) կՎ լարմամբ միացման համար	16.975	17.585	0.610

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ